




## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ



*Մարզկենտրոնը՝ ք. Իջևան*  
*Տարածաշրջանները՝ Իջևան, Տավուշ, Նոյեմբերյան, Դիլիջան*  
*Քաղաքներ՝ Իջևան, Նոյեմբերյան, Այրում, Բերդ և Դիլիջան*

ՀՀ *Տավուշի մարզը* գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիսարևելյան հատվածում: **Մարզը** հարավ-արևելքում և հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին և **պետական սահմանով՝** Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին:

Տարածքը	2704 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.1 %
Քաղաքային համայնքներ	5 <sup>1</sup>
Գյուղական համայնքներ	57
Քաղաքներ	5
Գյուղեր	60
Բնակչության թվաքանակը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ	134.2 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	52.6 հազ. մարդ
գյուղական	81.6 հազ. մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	39.2%
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2006թ.	4.2%
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2006թ. հուլիսի 1- դրությամբ)	112162 <sup>2</sup> հա
<i>այդ թվում՝ վարելահողեր</i>	25354 <sup>2</sup> հա

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 13.06.2006թ. ՀՕ-147-Ն ՀՀ օրենքի համաձայն Այրումը ստացել է քաղաքի կարգավիճակ:

<sup>2</sup> Առանց տնամերձերի (տնամերձերը ներառյալ գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 118428 հա, իսկ վարելահողերը՝ 27860 հա):

**Մարզի** կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2993 մ:

**ՀՀ Տավուշի մարզը** տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է Հայաստանի Հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: Այստեղ են գտնվում Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեճորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

**Մարզի** ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին (դենդրոպարկը): Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

**Մարզը** համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

**Մարզի** կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը: Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ասփով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

2006թ.-ին **մարզի տնտեսության հիմնական ճյուղերի** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.7%,
- գյուղատնտեսություն՝ 5.5%,
- շինարարություն՝ 1.0%,
- առևտուր և ծառայություններ՝ 1.7%:

**Մարզը** հանրապետության վառ արտահայտված **գյուղատնտեսական** շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր **անասնաբուծությունն ու խոզաբուծությունը**, իսկ բուսաբուծության մեջ՝ **հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը**: Ծրագրեր են իրականացվում պտղատու այգիների վերականգման ուղղությամբ: Վերջին տարիներին զարգացում է ապրում նաև **մեղվաբուծությունը**:

**Մարզի արդյունաբերության** առաջատար ճյուղը **մշակող արդյունաբերությունն** է: Առավել զերակշռող են **սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը**: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում **գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ**:

**Բեռնատրանսպորտի սարքավորումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը		
	2004	2005	2006
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	753	835	862
<i>այդ թվում`</i>			
խանութներ	230	351	447
կրպակներ	481	443	361
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2
առևտրի այլ օբյեկտներ	38	37	50

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը		
	2004	2005	2006
Հաստատություններ, ընդամենը	148	153	151
<i>որոնցից`</i>			
նախադպրոցական պետական	43	44	44
հանրակրթական պետական դպրոցներ	75	79	82
հանրակրթական ոչ պետական դպրոցներ	5	5	-
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	15	17	16
պետական միջին մասնագիտական ուսումնական	5	5	6
ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	1	1
պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղեր	2	2	2
ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	-	-

**Մարզկենտրոն Իջևան քաղաքը** (2006թ. տարեվերջին՝ 20.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 133 կմ հեռավորության վրա: Մարզի հյուսիս-արևելյան հատվածի **վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը**: Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է** (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և զինու արտադրությունը): Իջևան քաղաքը հայտնի է նաև **գորգագործությամբ**:

**Դիլիջան քաղաքի** (2006թ. տարեվերջին՝ 15.7 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 97 կմ է: Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ առանձնանում է **սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը**: Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրուլվա» հանքային ջուրը:

**Նոյեմբերյան քաղաքի** (2006թ. տարեվերջին՝ 5.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 185 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի **գյուղատնտեսությունը**, որի հիմնական ուղղությունն **անասնաբուծությունն ու դաշտավարությունն է**:

**Այրում քաղաքի** (2006թ. տարեվերջին՝ 2.4 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 205 կմ է: Այն կայարանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղվածությունը մանրածախ առևտուրն է: Աշխատանքներ են տարվում նախկինում լայն ճանաչում ստացած Այրումի պահածոների գործարանի վերագործարկման ուղղությամբ:

**Բերդ քաղաքի** (2006թ. տարեվերջին՝ 8.6 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 198 կմ է: **Քաղաքի տնտեսական կյանքում** գերակշռողը բազմաճյուղ **գյուղատնտեսությունն է**, որի մեջ առանձնանում են **խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը**:

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Իջևան	ք. Իջևան
Բերդ	ք. Բերդ
Դիլիջան	ք. Դիլիջան
Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան
Այրում	ք. Այրում

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1	Ազատամուտ
2	Ակնադրյուր
3	Աղավնավանք
4	Աճարկուտ
5	Այգեհովիտ
	<ul style="list-style-type: none"> <li>• Այգեհովիտ</li> <li>• Կայան</li> </ul>
6	Այգեձոր
7	Այգեպար
8	Աչաջուր
9	Արծվաբերդ
10	Արճիս

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
11	Բագրատաշեն	
12	Բաղանիս	
13	Բարեկամավան	
14	Բերդավան	
15	Բերքաբեր	
16	Գանձաքար	
17	Գետահովիտ	
18	Գոշ	
19	Դերեդավան	
20	Դեղձավան	
21	Դիտավան	
22	Դովեղ	
23	Ենոքավան	
24	Զորական (նախկինում՝ Վերին Բյորվիլու)	
25	Թեղուտ	
26	Իծաքար	
27	Լճկաձոր	
28	Լուսահովիտ	
29	Լուսաձոր	
30	Խաչքառակ	
31	Խաչարձան	
		<ul style="list-style-type: none"> <li>• Խաչարձան</li> <li>• Գեղատափ</li> <li>• Ճերմակավան</li> </ul>
32	Ծաղկավան (Իջևանի տարածաշրջան)	
33	Ծաղկավան (Տաուշի տարածաշրջան)	
34	Կիրանց	
35	Կոթի	
36	Կողբ	
37	Հաղարծին	
38	Հաղթանակ	
39	Հովք	
40	Մոսեսգեղ	
41	Նավուր	
42	Ներքին Կարմիր աղբյուր	
43	Նորաշեն	
44	Ոսկեպար	
45	Ոսկեվան	
46	Չինարի	
47	Չինչին	
48	Չորաթան	
49	Պառավաքար	
50	Պողավան	
51	Ջուջևան	
52	Սարիգյուղ	
53	Սևքար	
54	Վազաշեն	
55	Վարագավան	
56	Վերին Կարմիր աղբյուր	
57	Տավուշ (նախկինում՝ Թովուզ)	

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2006թ.**

	Ընդամենը	Որակ	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	5108	4892
Ծնվածներ, մարդ	120	58	62
Մահացածներ, մարդ	102	50	51
Անուանություններ	52	X	X
Անուանալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	28.4	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	147	76	71
հանրակրթական	1462	716	746
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	116	83	33
միջին մասնագիտական	118	67	51
բարձրագույն մասնագիտական	104	53	50
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	21675	...	...
Մարզիկներ, մարդ	57	11	46
Զբոսայգիներ, մարդ	3679	...	...
Որակից` գիտական հիմնարկներում	-	-	-
Որակից` գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	155	125	30
բժիշկներ	18	...	...
կրտսեր բուժանձնակազմ	52	...	...
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	302	198	104
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեկերջի դրությամբ, մարդ	1978	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	585	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	26150	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	395	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	24	X	X
այդ թվում` ոչ մեծ ծանրության	12	X	X
միջին ծանրության	5	X	X
ծանր	6	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: